Արտատպված է՝ Ի. Ա. Բունին, Վիպակներ և պատմվածքներ, Ե., «Սովետական գրող» հրատարակչություն, 1998. Դորա Եսայանի թարգմանությամբ։

ԿՈՎԿԱՍ

Մոսկվա գալով, ես գողավարի կանգ առա Արբատի մոտերքը մի նրբանցքում գտնվող անշուք հյուրանոցում, ապրում էի բանտարկյալի կյանքով՝ տեսակցությունից տեսակցություն նրա հետ: Այդ օրերի ընթացքում նա ինձ մոտ եղավ ընդամենը երեք անգամ և ամեն անգամ ներս էր ընկնում շտապով, ասելով.

— Եկել եմ միայն մի րոպեով…

Նա գունատ էր սիրող, ալեկոծված կնոջ գեղեցիկ գունատությամբ, ձայնը կտրվում էր և այն, ինչպես նա շպրտում էր հովանոցն ուր պատահի, շտապում բարձրացնել դիմաքողն ու իմ գիրկն ընկնել, հոգիս լցնում էր խղճահարությամբ ու հրճվանքով:

— Ինձ թվում է,— ասում էր,— որ նա ինչ-որ բան է կասկածում, որ նույնիսկ ինչ-որ բան գիտի, միգուցե կարդացել է ձեր մի նամակը, բանալի գտել իմ սեղանը բացելու... Կարծում եմ, որ նա իր դաժան, ինքնասեր բնավորությամբ կարող է ինչ ասես անել: Մի անգամ ինձ ուղղակի ասաց. «Ես ոչնչի առաջ կանգ չեմ առնի իմ պատիվը՝ ամուսնու և սպայի պատիվը պաշտպանելու համար»: Հիմա նա չգիտես ինչու հետևում է բացարձակապես իմ ամեն մի քայլին, և, որպեսզի մեր պլանը հաջողվի, պետք է չափազանց զգույշ լինեմ: Նա նույնիսկ պատրաստ է ինձ թողնելու, այնքան որ ներշնչել եմ, թե կմեռնեմ, եթե հարավ, ծով չգնամ, բայց, ի սեր աստծու, համբերություն ունեցեք:

Մեր պլանը շատ հանդուգն էր. մեկնել նույն գնացքով կովկասյան ծովափ և մի երեք-չորս շաբաթ ապրել այնտեղ որևէ խուլ վայրում: Ես լավ գիտեի այդ ծովափը, մի ժամանակ ապրել էի Սոչիի մոտերքը,— ջահել, միայնակ,— և հավերժորեն հիշողությանս մեջ էին մնացել այն աշնանային երեկոները սև նոճիների մեջ՝ սառը, գորշ ալիքների մոտ... Եվ նա գունատվում էր, երբ ասում էի. «Իսկ հիմա ես կլինեմ այնտեղ քեզ հետ, լեռնային ջունգլիներում, արևադարձային ծովի մոտ...»: Մեր պլանի իրականանալուն չէինք հավատում մինչև վերջին պահը. չափազանց մեծ էր թվում երջանկությունը մեզ այն ժամանակ: Մոսկվայում սառն անձրևներ էին, թվում էր ամառն անցել է ու չի վերադառնա, ցեխ էր, կիսամութ, փողոցները թաց ու սև փայլփլում էին անցորդների բացված հովանոցներից և կառքերի բարձրացված ու սլացքից ցնցվող ծածկերից: Ու մութ, անտանելի երեկո էր, երբ գնում էի կայարան, մեջն ամեն ինչ ասես մարել էր տագնապից ու ցրտից: Կայարանի շենքն ու կառամատույցն անցա վազքով, գլխարկս աչքերիս քաշած ու դեմքս պահած վերարկուիս օձիքի մեջ:

Առաջին կարգի փոքրիկ կուպեում, որ պատվիրել էի նախապես, հորդ անձրևը թափվում էր տանիքի վրայով: Անմիջապես ծածկեցի պատուհանի վարագույրը, և հենց բեռնակիրը ներս բերեց իրերս, սպիտակ գոգնոցին քսելով չորացրեց թաց ձեռքն ու իր թեյանվերն

առնելով դուրս եկավ, դուռը փակեցի փականքով: Հետո վարագույրը մի փոքր հետ տարա ու քարացա, աչքս չկտրելով խայտաբղետ ամբոխից, որ իրերն առած ետ ու առաջ էր անում վագոնի երկայնությամբ, կայարանի աղոտ լապտերների լույսի տակ: Պայմանավորվել էինք, որ ես կայարան պիտի գամ որքան հնարավոր է շուտ, իսկ նա՝ որքան կարելի է ուշ, որպեսզի հանկարծ չհանդիպեմ նրան և ամուսնուն կառամատույցում: Հիմա արդեն ժամանակն էր, որ նրանք էլ գային: Նայում էի գնալով ավելի ու ավելի լարված՝ նրանք չկային ու չկային: Երկրորդ զանգը խփեց, վախից ուղղակի սառեցի. ուշացել է կամ ամուսինը վերջին պահին հանկարծ բաց չի թողել նրան: Եվ անմիջապես էլ ցնցվեցի՝ տեսնելով նրա բարձրահասակ կերպարանքը՝ սպայական գլխարկով, նեղ շինելով, զամշե ձեռնոց հագած ձեռքով կնոջ թևը բռնած: Ետ քաշվեցի պատուհանից, ընկա բազմոցի մի անկյունը: Կողքին երկրորդ կարգի վագոնն էր, մտովի տեսնում էի, ինչպես նա տիրոջ նման ներս է մտնում վագոն կնոջ հետ, նայում է, արդյոք լավ է տեղավորել նրան բեռնակիրը, և հանում է ձեռնոցը, հանում գլխարկը համբուրվելով նրա հետ, խաչակնքելով նրան... Երրորդ զանգն ինձ խլացրեց, շարժվող գնացքն անզգայացած վիճակի հասցրեց... Գնացքն ընթացքն արագացնում էր, ցնցվելով, երերալով, հետո սկսեց համաչափ շարժվել, արագություն առած... Վագոնավարին, որ նրան բերեց ինձ մոտ և տեղափոխեց նրա իրերը, սառցի պես սառած ձեռքով տասռուբլիանոց թղթադրամ տվեցի…

Ներս գալով, նա նույնիսկ չհամբուրեց ինձ, միայն խղճալի ժպտաց, նստելով բազմոցին, հանելով մազերին ամրացրած գլխարկը:

— Բոլորովին չէի կարողանում ճաշել,— ասաց նա։— Կարծում էի մինչև վերջ չեմ կարողանա տանել այս սարսափելի դերը: Եվ սարսափելի ծարավ եմ: Ինձ նարզան տուր,— ասաց, առաջին անգամ դու-ով ինձ դիմելով։— Համոզված եմ, որ գալու է ետևիցս: Նրան երկու հասցե տվեցի. Գելենջիկ և Գագրա: Եվ նա մի երեք-չորս օրից կլինի Գելենջիկում… Բայց աստված իր հետ, մեռնելն այս տառապանքներից լավ է…

Առավոտյան, երբ դուրս եկա միջանցք, այն ողողված էր արևով, շոգ էր, զուգարաններից տարածված օճառի, օծանելիքի հոտերով, ինչպես լինում է մարդաշատ վագոնում առավոտյան: Փոշուց պղտոր ու տաքացած պատուհաններից երևում էր արևախանձ տափաստանը, երևում էին փոշոտ լայն ճանապարհներ, եզներ լծված սայլեր, երևում և անցնում էին երկաթուղային փայտե տնակները՝ արևածաղիկների վառ դեղին գլխիկներով և ալ մոլոշավարդերով նախապարտեզներում... Այնուհետև ձգվեցին մերկ անծայրածիր հարթավայրերը բլուրներով ու հին գերեզմանոցներով, անտանելի այրող արև, երկինք, նման փոշու ամպի, հետո հորիզոնում երևացին առաջին լեռների ուրվապատկերները…

Գելենջիկից և Գագրայից նա նրան մեկական բացիկ ուղարկեց, գրեց, որ դեռ չգիտի, թե որտեղ կմնա:

Եվ ապա մենք ծովափով իջանք դեպի հարավ:

Գտանք կուսական մի վայր, ամբողջապես ծածկված չինարի անտառներով, ծաղկող թփուտներով, կարմիր ծառով, մագնոլիայի, նռան ծառերով, որոնց միջև վեր էին խոյանում հովարաձև արմավենիները, սևին տալիս նոճիները… Ես արթնանում էի վաղ, և մինչ նա քնած էր, մինչև թեյը, որ խմում էինք ժամը յոթի մոտերքը, քայլում էի բլուրներով դեպի անտառի խորքերը: Տաք արևն արդեն ուժեղ էր, մաքուր և պայծառ: Անտառներում ջինջ կապտին էր տալիս, բացվում ու հալչում էր անուշաբույր մշուշը, հեռավոր անտառածածկ կատարներից այն կողմ շողշողում էր ձյունածածկ լեռների մշտնջենական սպիտակը... Ետ էի վերադառնում տոթ ու խողովակներից այրվող աթարի հոտ արձակող մեր գյուղի շուկայով. այնտեղ եռում էր առևտուրը, շարժվելու տեղ չկար մարդկանցից, ձիերից և ավանակներից,— առավոտներն այդ շուկա էին լցվում տարբեր ցեղերի պատկանող լեռնականներ,— սահուն շարժվում էին չերքեզուհիները երկար, մինչև գետին հասնող հագուստներով, կարմիր մուճակներ հագած, գլուխները ինչ-որ սև բանով փաթաթած, երբեմն արագ մի հայացք գցելով այդ սգո փաթաթվածքի միջից:

Հետո մենք գնում էինք ծովափ, միշտ լրիվ ամայի, լողանում էինք և պառկում արևի տակ մինչև նախաճաշ: Նախաճաշից հետո,— միշտ տապակած ձուկ, սպիտակ գինի, ընկույզ և մրգեր,— կղմինդրածածկ մեր խրճիթի շոգ կիսամթի մեջ փակոցափեղկերի արանքներից լույսի տաք, ուրախ շողիկներ էին թափանցում:

Երբ շոգը մեղմանում էր և բացում էինք պատուհանը, ծովի մի կտորը, որ երևում էր մեզնից ցած ընկած լանջին բարձրացող նոճիների արանքից, մանուշակի գույն ուներ ու փռված էր այնքան հարթ, այնքան խաղաղ, որ թվում էր երբեք վերջ չի լինելու այս խաղաղությանը, այս գեղեցկությանը:

Մայրամուտին հաճախ ծովի ետև կուտակվում էին զարմանալի ամպեր. նրանք լողում էին այնքան գեղեցիկ, որ նա հաճախ պառկում էր թախտին, դեմքը ծածկում շղարշե թաշկինակով ու լալիս էր. ևս երկու-երեք շաբաթ, ու նորից՝ Մոսկվա:

Գիշերները տաք էին, ականակույր, սև մթի մեջ լողում էին, առկայծում, տպազիոնի լույսով փայլփլում հրե ճանճերը, ապակե զանգուլակների նման զնգզնգում էին ծառագորտերը: Երբ աչքդ սովորում էր մթին, վերևում սկսում էին երևալ աստղերն ու լեռնակատարները, գյուղի գլխին ուրվագծվում էին ծառերը, որ չէինք նկատում ցերեկը: Եվ ամբողջ գիշեր լսվում էր այնտեղից՝ դուքանից, թմբուկի խուլ ձայն ու կոկորդային, թախծալի ողբը ասես միշտ նույն անվերջանալի երգի:

Մեզնից ոչ հեռու, ափամերձ ձորակում, որ անտառից դեպի ծով էր իջնում, քարքարոտ հունով արագ թռչկոտում էր մի ծանծաղ, վճիտ գետակ: Ի՜նչ գեղեցիկ փշրվում, կայծկլտում էր նրա փայլն այդ խորհրդավոր ժամին, երբ լեռների ու անտառների ետևից, ինչպես հրաշք արարած, սևեռուն նայում էր ուշ լուսինը:

Երբեմն գիշերները լեռներից սարսափելի ամպեր էին իջնում, կատաղի փոթորիկ էր սկսվում, անտառների աղմկոտ գերեզմանային սևի մեջ շուտ-շուտ ճեղքվում էին

մոգական կանաչ անդունդներ և երկնքի բարձունքում ճայթում էին որոտի անդրջրհեղեղյան թնդյունները: Այդժամ անտառներում արթնանում ու մլավում էին արծվիկները, ոռնում էր հովազը, հաչում կեռնեխակտուցները... Մի անգամ մեր լուսավորված պատուհանի մոտ մի ամբողջ երամ էր հավաքվել,— այդպիսի գիշերներին դրանք միշտ հավաքվում են բնակատեղերի մոտ,— բացեցինք պատուհանը ու նայում էինք վերևից, ինչպես կանգնել էին փայլփլուն հեղեղի տակ ու հաչում էին, ուզում էին ներս գալ... Նա ուրախ լալիս էր, նայելով դրանց:

Ամուսինը որոնել էր նրան Գելենջիկում, Գազրայում, Սոչիում: Սոչի գալու հաջորդ օրը նա առավոտյան լողացել էր ծովում, հետո սափրվել, հագել մաքուր սպիտակեղեն, ձյունասպիտակ կիտել, նախաճաշել էր իր հյուրանոցում, ռեստորանի բաց պատշգամբում, խմել մի շիշ շամպայն, սուրճ շարտրեզով, առանց շտապելու ծխել մի սիգար: Վերադառնալով իր համար, պառկել էր բազմոցին և կրակել քունքին երկու ատրճանակից:

12 նոյեմբերի 1937